ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-19/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

գ. Գանձակ **«12» «07» 2019թ.**
ժ 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Թ. Գեղամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հարությունյան, Ա. Ավետիսյան
Հանձնաժողովիքարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով՝

- <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ-ի և <<Բերդուս>> ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (գնահատման թերթիկները, որակավորման փաստաթղթերը և եզրակացությունը կցվում է)՝
- 1-ին չափաբաժնով՝ <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- 2-րդ և 3-րդ չափաբաժիններով՝ <<Բերդուս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 17.07.2019թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գանձակ, Բաղրամյան 4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Թ. Գեղամյան

Անդամներ՝ _____ Մ. Հարությունյան

_____ Ա. Ավետիսյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան